



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2014

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան3

Գյուտեր և օգտակար մոդելներ4

Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ7

Տեղեկատվական տեխնոլոգիաներ 11

Գրանցված օբյեկտների նկատմամբ
իրավունքների փոխանցումը, լիցենզիաների
տրամադրումը և իրավունքների պահպանության
ժամկետների երկարաձգումը..... 13

Միջազգային համագործակցություն 15

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից

Խմբագրական կոլեգիա՝ Արմեն ԱԶԻԶՅԱՆ
Անդրանիկ ԽԱԶԻԿՅԱՆ
Արփինե ԵԳԱՆՅԱՆ
Սուսաննա ՂԱԿԹՅԱՆ

Դիզայնը և էջադրումը՝ Կարինե ՄԵԼՈՅԱՆԻ

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 011 597 537 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 011 597 535 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին
Internet: www.aipa.am
E-mail: armpat@aipa.am

© ՀՀ մտավոր սեփականության գործակալություն

ՆԱԽԱԲԱՆ

Մտավոր սեփականության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Մտավոր սեփականության գործակալությունը 2014թ. շարունակեց արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված իր հիմնական գործառնությունների իրականացումը՝ ապահովելով գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների հայտերի ընդունման, փորձաքննության անցկացման, պահպանական փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաև պաշտոնական տեղեկությունների հրապարակման և իր կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքների կատարումը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են բնագավառի իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքները:

Քննարկվել են ՀՀ կառավարության կողմից շրջանառության մեջ դրված մի շարք նորմատիվային փաստաթղթերի նախագծեր, որոնց վերաբերյալ ներկայացվել են համապատասխան առաջարկություններ և դիտողություններ:

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱՎԱՐ ՄՈՂԵԼՆԵՐ

2014թ. Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 123 գյուտի և 58 օգտակար մոդելի հայտ, որոնցից 175-ը՝ ազգային հայտատուներից, 6-ը՝ օտարերկրյա հայտատուներից:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 4032:

Աղյուսակ 1

Երկիրը	2013	2014
Հայաստան	165	175
Այլ երկրներ	7	6
Ընդամենը	172	181

2013թ. համեմատությամբ 2014թ. ստացված հայտերի ընդհանուր քանակը ավելացել է 9-ով, ընդ որում՝ ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը ավելացել է 10-ով, իսկ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը պակասել է 1-ով:

Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (ժնև) ներկայացվող միջազգային և Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա) ներկայացվող եվրասիական հայտերով գործակալությունը հանդես է գալիս որպես ստացող գերատեսչություն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանց համար:

2014թ. գործակալությունը ստացել է 3 միջազգային հայտ, ստուգել է անհրա-

ժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և արդյունքում սահմանել է միջազգային հայտերի ներկայացման թվականը և այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Միջազգային բյուրո:

Այսպիսով, 1994-2014թթ. ժամանակահատվածում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո առաքվել է գյուտի 81 միջազգային հայտ:

2014թ. գործակալությունը ստացել է 1 եվրասիական հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և արդյունքում սահմանել է եվրասիական հայտի ներկայացման թվականը և այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն:

Այսպիսով, 1997-2014թ. ժամանակահատվածում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 37 եվրասիական հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում գործավարությունն ավարտվել է 242 հայտով, ընդ որում՝

- 121 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին,

- 55 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի հայտը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու և արտոնագիր տալու մասին,

- 33 հայտով կայացվել են որոշումներ գյուտի (օգտակար մոդելի) հայտը հետ կանչված համարելու մասին,

- 28 հայտով կայացվել է որոշում գյուտի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին,

- 5 հայտով կայացվել է որոշում օգտակար մոդելի արտոնագիր տալն ամբողջությամբ մերժելու մասին:


Հայտերի քննարկման արդյունքները դիագրամի տեսքով բերված են նկ.1-ում:

2014թ. ազգային և օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի բաշխումն ըստ Միջազգային արտոնագրային դասակարգման բաժինների բերված է նկ.2-ում՝ գրաֆիկի տեսքով: 2014թ. ստացված հայտերի բաշխումն ըստ տեխնիկայի բնագավառների բերված են աղյուսակ 2-ում:

2014թ. տրվել է գյուտի 108 արտոնագիր և օգտակար մոդելի 40 արտոնագիր, որոնցից օտարերկրյա հայտատուներին տրվել է գյուտի 4 արտոնագիր և օգտակար մոդելի 1 արտոնագիր:

2014 թվականի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության 2904 գյուտի արտոնագրերից Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 279-ը, իսկ օգտակար մոդելի 384 արտոնագրերից գործում են 92-ը:

2014 թվականի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են 3482 Եվրասիական արտոնագրեր:




Նկ. 1

■ Արտոնագիր տալու մասին որոշում ստացած հայտեր

■ Հայտը հետ կանչված ճանաչելու և արտոնագիր տալը մերժելու մասին որոշում ստացած հայտեր

Նկ. 2



- A. Մարդու կենսական պահանջների բավարարում
- B. Տարբեր տեխնոլոգիական պրոցեսներ, տրանսպորտ
- C. Քիմիա, մետաղագործություն
- D. Մանածագործություն, թուղթ
- E. Շինարարություն, լեռնագործություն
- F. Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ և պոմպեր, գեյք և ռազմամթերք, պայթեցման աշխատանքներ
- G. Ֆիզիկա
- H. Էլեկտրականություն

Աղյուսակ 2

No	Քննարկվող (ըստ ՄԱԴ-ի դասի/ենթադասի)	Ներկայացված հայտերի քանակը	%-ը հայտերի ընդհանուր թվի մեջ
1.	Չափում և օպտիկա (G01-G03)	25	13.81%
2-3.	Նյութերի մշակում, շերտավոր նյութեր (B21-B0, B32)	15	8.29%
2-3.	Շինարարություն (E01-E06)	15	8.29%
4.	Բժշկություն և անասնաբուժություն (A61-A63, բացի A61K)	14	7.74%
5.	Շարժիչներ և պոմպեր (F01-F04)	11	6.08%
6-7.	Անօդաչու քիմիա (C01-C05, C30)	10	5.52%
6-7.	Էլեկտրական տեխնիկա (H01, H02, H05)	10	5.52%
8.	Տրանսպորտ (B60-B68)	8	4.42%
9-11.	Կենսաքիմիա, շաքար, կաշիներ (C12-C14)	7	3.87%
9-11.	Լուսավորում, ջեռուցում, սառնարանային տեխնիկա (F21-F28)	7	3.87%
9-11.	Սննդամթերք և ծխախոտ (A21-A24)	7	3.87%
12-13.	Չեփք և զինամթերք (F41, F42, C06)	6	3.31%
12-13.	Գյուղատնտեսություն (A01, բացի A01N)	6	3.31%
14-27.	Այլ քննարկվածներ	40	22.10%
14-27.	Այլ քննարկվածներ	40	22.10%
Ընդամենը		181	100

ԱՊՐԱՆՔԱՑԻՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ


2014թ. ազգային ընթացակարգով ստացվել են ապրանքային նշանների գրանցման 1950 հայտ (որոնցից 1341-ը՝ ազգային հայտատուներից), որոնց բաշխումն ըստ հայտատուների երկրների դիագրամի տեսքով բերված է նկ.3-ում:

Ապրանքային նշանների 1299 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն: Հետ են կանչվել 33 հայտ, 165 հայտով կայացվել է ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումներ:

Գրանցվել են 1584 ապրանքային

նշաններ (որոնցից 1018-ը՝ ազգային հայտատուների անունով): Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի և դրա արձանագրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշանը ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 2897 ծանուցում: Միջազգային ծանուցումներով կայացվել են 2568 որոշում ապրանքային նշաններին իրավական պահպանություն տրամադրելու վերաբերյալ, նախնական մերժման մասին

Նկ. 3



կայացվել է 616 որոշում, իսկ վերջնական մերժման մասին՝ 552:

Հայտերի բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է աղյուսակ 3-ում:

Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է միջազգային գրանցման 31 հայտ:

2013թ. համեմատությամբ 2014թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը աճել է՝ 1168-ի դիմաց (2013թ.) 1341 հայտ:

Ինչ վերաբերում է օտարերկրյա իրավաբանական անձանց ակտիվությանը, ապա այն նվազել է ազգային ընթացակարգով (660- ի (2013թ.) դիմաց 609 հայտ):

Հաշվետու ժամանակաշրջանում Մտավոր սեփականության գործակալություն ազգային ընթացակարգով ներկա-

յացվել է 33 արդյունաբերական նմուշի հայտ (որոնցից 27-ը՝ ազգային հայտատուներից, 2-ը՝ Կորեայի Հանրապետությունից 1-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից, 1-ը՝ Կանադայից, 1-ը՝ Շվեյցարիայից, 1-ը՝ Վրաստանի Հանրապետությունից), որոնցից 27-ը ստացել են վկայագիր:

2013թ. համեմատությամբ 2014թ. արդյունաբերական նմուշի հայտերի քանակը չի փոխվել՝ ազգային հայտատուներից ստացված՝ 29-ի դիմաց (2013թ.) 27 հայտ, իսկ օտարերկրյա հայտատուներինը՝ 4-ի դիմաց (2013թ.) 6 հայտ:

Արդյունաբերական նմուշների Հաագայի համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին 210 ծանուցում:

Երկիրը		Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի և դրան կից արձանագրության շրջանակներում	Ընդամենը
AM	Հայաստան	1341		1341
AE	Արաբական Միացյալ Ամիր.	15	12	27
AR	Արգենտինա	3		3
AT	Ավստրիա		32	32
AU	Ավստրալիա		9	9
BB	Բարբադոս	1		1
BE	Բելգիա		51	51
BG	Բուլղարիա	1	40	41
BR	Բրազիլիա	4		4
BX	Բենիլյուքս		1	1
BY	Բելառուս		23	23
BZ	Բելիզ		2	2
CA	Կանադա	2	1	3
CH	Շվեյցարիա	46	194	240
CN	Չինաստան	10	181	191
CU	Կուբա	10	3	13
CY	Կիպրոս	12	52	64
CZ	Չեխիայի Հանրապետություն	2	34	36
DE	Գերմանիա	20	213	233
DK	Դանիա	3	16	19
DM	Դոմինիկանա		1	1
EE	Էստոնիա		3	3
EG	Եգիպտոս		1	1
EM	Եվրոպայի Միություն (OHIM)		12	12
ES	Իսպանիա	5	59	64
FI	Ֆինլանդիա	4	6	10
FR	Ֆրանսիա	12	138	150
GB	Միացյալ Թագավորություն	27	72	99
GE	Վրաստան	2	4	6
GI	Ջիբրալթար		1	1
GR	Հունաստան		7	7
HK	Հոնգ Կոնգ	1		1
HR	Խորվաթիա		1	1
HU	Հունգարիա		129	129
IE	Իռլանդիա	7	10	17
IL	Իսրայել		5	5
IN	Հնդկաստան	26	13	39

IR	Իրան	15	21	36
IS	Իսլանդիա		9	9
IT	Իտալիա	6	178	184
JP	Ճապոնիա	20	61	81
KG	Ղրղզստան		1	1
KR	Կորեայի Հանրապետություն	23	25	48
KY	Կայմանյան կղզիներ	1		1
KZ	Ղազախստան		4	4
LB	Լիբանան	4	1	5
LI	Լիխտենշտայն		40	40
LV	Լատվիա	2	10	12
LT	Լիտվա	2	2	4
LU	Լյուքսեմբուրգ	7	35	42
MA	Մարոկկո	1	1	2
MC	Մոնակո		6	6
MD	Մոլդովայի Հանրապետություն		8	8
MT	Մալթա		10	10
MX	Մեքսիկա		2	2
NL	Նիդերլանդներ	9	32	41
NO	Նորվեգիա		10	10
NZ	Նոր Չելանդիա		4	4
PA	Պանամա		2	2
PH	Ֆիլիպիններ		1	1
PL	Լեհաստան	4	36	40
PT	Պորտուգալիա		9	9
QA	Զաթար	1		1
RO	Ռումինիա		3	3
RU	Ռուսաստանի Դաշնություն	65	406	471
SA	Սաուդյան Արաբիա	1		1
SE	Շվեդիա	1	12	13
SG	Սինգապուր	1	10	11
SI	Սլովենիա		26	26
SM	Սան Մարինո		2	2
TR	Թուրքիա	4	208	212
TW	Տայվան	6		6
UA	Ուկրաինա	27	104	131
US	ԱՄՆ	187	269	456
UY	Ուրուգվայ		2	2
UZ	Ուզբեկստան		2	2
VG	Վիրջինյան կղզիներ	9	19	28
Ընդամենը		1950	2897	4847

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2014թ. հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 12 համար հայերեն և ռուսերեն լեզուներով: Տեղեկագրերում ընդգրկվել են պաշտոնական տեղեկություններ 108 գյուտի, 40 օգտակար մոդելի արտոնագրերի, 27 արդյունաբերական նմուշի վկայագրերի, 1584 գրանցված ապրանքային նշանների մասին, ընդգրկվել են նաև տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման, ինչպես նաև տեղեկություններ արտոնագրերի և ապրանքային նշանների զիջման պայմանագրերի և լիցենզային պայմանագրերի գրանցման մասին:

Իրականացվել է գյուտերի և օգտակար մոդելների գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների և հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևերի, ինչպես նաև արդյունաբերական նմուշների նկարների ներմուծումը և հրապարակումը՝ արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու համար, գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինտերնետային կայքում, ինչպես նաև «CISPATENT» սկավառակի վրա տեղադրելու համար՝ համընդհանուր օգտագործման նպատակով:

Իրականացվել է 2013թ. «Տարեկան հաշվետվություն» տեղեկագրի նախապատրաստումը և հրապարակումը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով և դրանց էլեկտրոնային ձևերի պատրաստումը ինտերնետային էջում տեղադրելու համար:

Ստավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ) ներկայացնելու համար պատրաստվել են 2013 թ. տեխնիկական և վիճակագրական հաշվետվությունները գյուտերի և օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների վերաբերյալ:

Պաշտոնական տեղեկագրերն անհատույց փոխանցվել են Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի Ճարտարագիտական համալսարանի, Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գրադարաններ և Հայաստանի ազգային գրադարան, ինչպես նաև Ազգային գրապալատ: Պաշտոնական տեղեկագրերն անհատույց ուղարկվել են նաև ՀՀ մարզային կենտրոններ:

Գործակալությունը շարունակել է Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնի արտոնագրային ֆոնդի համալրումը: Կենտրոնին տրամադրվել է օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններից ստացված տեղեկատվությունը:

Ի կատարումն «Կոմպակտ սկավառակների վրա արտոնագրային տեղեկատվական տարածաշրջանային համատեղ արտադրանքի թողարկման մասին» համաձայնագրի, թողարկվել են «CISPATENT» անվանմամբ 12 կոմպակտ սկավառակներ, որտեղ զետեղված են Հայաստանի Հանրապետությունում արտոնագիր ստացած 108 գյուտի և 40 օգտակար մոդելի մասին մատենագիտական տվյալներ հայերեն, ռուսերեն և անգլերեն

լեզուներով: Վերոհիշյալ համաձայնագրի կատարման աշխատանքներն ընթացքում են:

2014թ. շարունակվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված գյուտերի և օգտակար մոդելների մասին տվյալների փոխանցումը Եվրասիական արտոնագրային գերատեսչություն՝ տեղեկատվական որոնման համակարգի հիմնապաշարի համալրման նպատակով:

2014 թվականի ընթացքում ներդրվել են «Գյուտերի և օգտակար մոդելների» և «Արդյունաբերական նմուշների» գործավարության համար նախատեսված վեբ-տեխնոլոգիաների հիման վրա ստեղծված նոր համակարգերը:

Հաշվետու ժամանակաշրջանում շա-

րունակվել են գործակալության աշխատանքների ավտոմատացումը և տեխնիկական վերազինումը: Գործակալությունը վերազինվել է համակարգչային օժանդակ սարքերով և սարքավորումներով: Վերացվել են գործակալության տեղեկատվական համակարգի մեջ շահագործման ընթացքում ի հայտ եկած թերությունները և բացթողումները:

Իրականացվել է ներքին ցանցի մալուխների ապամոնտաժում և մոնտաժում:

Իրականացվել է համակարգչային ծրագրերի տեղադրում և կարգաբերում, վնասված համակարգիչների և ծրագրերի փոխարինում և անսարքության վերացում:

ԳՐԱՆՑՎԱԾ ՕՐՑԵՎՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ, ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄԸ

Մտավոր սեփականության բնագավառի ՀՀ օրենսդրությանը համապատասխան գործակալությունը սկսած 1995 թվականից իրականացնում է արդյունաբերական սեփականության գրանցված օբյեկտների նկատմամբ իրավունքների փոխանցման և լիցենզիաների տրամադրման հետ կապված դիմումների քննարկումը և պայմանագրերի գրանցումը:

Հաշվետու ժամանակաշրջանում քննարկվել և գրանցվել են 904 դիմում, որոնցից 78-ը՝ ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցումը գրանցելու մասին, 19-ը՝ ապրանքային նշանների լիցենզիաները գրանցելու մասին, 1-ը՝ ապրանքային նշանների ֆրանչայզինգի մասին, 2-ը՝ ապրանքային

նշանների ենթալիցենզիաների մասին և 3-ը՝ ապրանքային նշանների լիցենզիայի փոփոխությունը գրանցելու մասին, ինչպես նաև 3-ը՝ գյուտի արտոնագրային բացառիկ լիցենզիա տալու մասին, 3-ը՝ արտոնագրի զիջում, 2-ը՝ արտոնագրի լիցենզիայի փոփոխություն, 3-ը՝ ապրանքային նշանների լիցենզիաների չեղյալ հայտարարում, 501-ը՝ ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգում, 299-ը՝ գյուտի, օգտակար մոդելի արտոնագրերով վերապահված և արդյունաբերական նմուշի գրանցումից բխող իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգում:

Ապրանքային նշանների նկատմամբ իրավունքների փոխանցման պայմանագրերը կնքվել են ինչպես

Աղյուսակ 4

	2010	2011	2012	2013	2014
Իրավունքի փոխանցման պայմանագրեր	72	56	101	79	81
Լիցենզիայի տրամադրման պայմանագրեր և պայմանագրերում կատարված փոփոխություններ	19	24	25	31	34
Ֆրանչայզինգի պայմանագրեր	-	1	5	2	1
Գրավադրման պայմանագրեր	-	2	1	4	62
Գրանցված պայմանագրերի ընդհանուր թիվը	91	83	132	116	178

ազգային, այնպես էլ օտարերկրյա իրավաբանական անձանց միջև:

2014թ. ընթացքում գործակալության կողմից գրանցված պայմանագրերի ընդհանուր թիվը 2013թ. համեմատ աճել է 53%-ով և կազմել է 178 պայմանագիր:

Վերջին հինգ տարիներին գրանցված իրավունքների փոխանցման և լիցենզիաների տրամադրման պայմանագրերի թիվը բերված է աղյուսակ 4-ում:

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի և «Ապրանքային նշանների գրանցման գործողության ժամկետի երկարաձգման մասին դիմումների ձևակերպման և քննարկման» կարգի

համաձայն գործակալությունը իրականացրել է 501 ապրանքային նշանների գործողության ժամկետների երկարաձգում, ինչպես նաև 299 գյուտի, օգտակար մոդելի արտոնագրերով վերապահված և արդյունաբերական նմուշի գրանցումից բխող իրավունքների պահպանության ժամկետների երկարաձգում:

2014թ. ընթացքում պատրաստվել և իրավատերերին է հանձնվել 1584 ապրանքային նշանների վկայագրեր, 95 գյուտի արտոնագրեր, 37 օգտակար մոդելների արտոնագրեր և 27 արդյունաբերական նմուշների վկայագրեր: Ապրանքային նշանների պետական գրանցամատյանում կատարվել է 260 փոփոխություն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջազգային համագործակցության շրջանակներում Մտավոր սեփականության գործակալությունը համագործակցում է միջազգային կառույցների, ինչպես նաև օտարերկրյա նմանատիպ կազմակերպությունների հետ:

Հաշվետու ժամանակաշրջանում միջազգային համագործակցության շրջանակներում գործակալության մասնագետները մասնակցել են ՄՍՀԿ, ԵԱԱԳ կողմից կազմակերպվող սեմինարներին, գործնական հանդիպումներին և որակավորման բարձրացման դասընթացներին:

Թվինինգ ծրագրի շրջանակներում Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում և Վ. Բոյուտովի անվան լեզվաբանության համալսարանում անցկացվել են դասընթացներ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պահպանությունը և պաշտպանությունը թեմայով: Դասընթացները վարում էին

բնագավառում հայտնի եվրոպական փորձագետները, ՄՍԳ և «Հայհեղինակ» հասարակական կազմակերպության մասնագետները: Մասնակցության վկայականներ ստացան մոտ 200 ուսանող:

Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության նպատակով Հայաստան ժամանեցին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամներ: Քննարկվել և ավարտուն տեսքի է բերվել ԵՏՄ միջոցառումների ծրագիրը (Ճանապարհային քարտեզը) և դրա իրականացմանն ուղղված գործողությունների ժամանակացույցը:

2014 թվականի հունիս ամսին հաջողությամբ ավարտվեց «Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության իրավունքների կիրարկման համակարգի հզորացում» Թվինինգ ծրագիրը: